

իր տաղաչափությունն է զինք վարողը իր քերթուածները գրելու պահուն, քան թէ ինք զայն վարողը: Յանգի ծայրայեղ մոլությունն ալ կը դաւաճանէ իրեն. աւելի լաւ են այն քերթուածները, որոնք յանգ չունին. բանաստեղծը ի սէր տաղաչափութեան կ'ըսէ բառեր, որոնց վրայ թերեւս չմտածեց իսկ:

Սեթեանի երկրորդ գործը, *Յուզման ժամերը*, արդէն իսկ գլուխ-գործոցներ կը պարունակէ: Այս գործին մէջ որոշակի կ'երեւայ ազդեցութիւնը Եղիա Տէմիրճիպաշեանի, որուն եւս քերթուածներ ձօնած ունի: Սեթեան մասնաւոր հաճոյք մը եւ ընդունակութիւն մը ունի կոյր նկարագրելու: Ռօմանթիքներու նման, ինք եւս ունի իր քերթուածները գիտով մը վերջացնելու կարողութիւնը, զանոնք տպաւորիչ դարձնելու համար: Ու Սեթեան, յանկարծ, վերջացուցած պահուն, ուժգին պատկեր մը կը ցցէ մեր դէմ, ինչպէս *Միականին, Կոյր աղջիկը, Կոյր երգեցիկները* քերթուածներուն մէջ:

Սէրը մեծ տեղ կը գրաւէ Սեթեանի քերթուածներուն մէջ, բայց այդ սէրը մշտական, յաւիտենական մանուկի մը սէրն է. տարփանքներէ աւելի խուսափուկ հանդիպումներ եւ նայումաճքի պատահումներ են իր սիրոյն աղբիւրը. իր քերթուածներուն մէջ մեծ մաս մը գեղեցիկ գիտերով կը վերջանան: Ունի հայրենանուէր քերթուածներ, գլխաւորաբար իր ֆրանսերէն քերթուածները: Իր իմաստասիրութիւնը հոգեպաշտութիւնն է:

Յովհաննես Սեթեանի բանաստեղծութիւնը իր որոշ տեղը ունի թրքահայ գրականութեան մէջ, ուր կը գրաւէ ամէնէն յարգելի տեղերէն մեկը: